ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/12592-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՍ-896-11.03.2021-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 400 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՋԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-896-11.03.2021-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3.1-ին մասով, որի համաձայն ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի պահանջներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել ռազմարդյունաբերության ոլորտի պետական լիազոր մարմնում բարձրագույն կրթության երկրորդ կամ երրորդ մակարդակի կրթական ծրագրի ուսումնառություն անցնելու ցանկություն հայտնած քաղաքացիներին, որոնց հետ կնքվում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր, տարկետման տրամադրման և տարկետումը դադարեցնելու հարաբերությունները սահմանվելու են ՀՀ կառավարության որոշմամբ: Ծրագրի մասնակիցները, շարունակելով համարվել ընթացիկ ուսումնական հաստատության ուսանող, ստանում են կրտսեր սպայական կոչում և պայմանագրային հիմունքներով աշխատանքի են անցնում ռազմարդյունաբերական համալիրում՝ առնվազն նվազագույն սպայական աշխատավարձով:

Միաժամանակ, նախագծով նախատեսված ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագրի մանրամասները սահմանվում են օրենքում լրացվող հավելվածով:

Նախագծի հիմնավորման համաձայն «...պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետման իրավունք է սահմանում միայն բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացիների համար, մինչդեռ, որոշակի մասնագիտություններով մագիստրոսական կրթական ծրագրով և հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերով կրթություն ստացող քաղաքացիների ներուժը ևս կարող է օգտագործվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (այսուհետ՝ զինված ուժեր) մարտունակության բարձրացման նպատակով: Ներկայացված նախագծով առաջարկվող մոտեցումը միտված է ռազմարդյունաբերական համալիրում և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բուհերում համատեղ ուսումնական ծրագրի իրականացմանը, որը նպատակ ունի նշված ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների գիտական պոտենցիալն օգտագործելու ռազմարդյունաբերական համալիրում՝ նպաստելով զինված ուժերում բարձր տեխնոլոգիաների և նորագույն գիտատեխնիկական ձեռքբերումների կիրառմանը և, մյուս կողմից, ստեղծել հարթակ երիտասարդ գիտնականների գիտական նոր ձեռքբերումների և շարունակական զարգացման համար:»:

Այդ կապակցությամբ ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության դիտարկումներն ու առաջարկությունը:

1. Ներկայացված նախագծում կիրառվում են հասկացություններ, որոնք անհա-

մապատասխանության մեջ են մտնում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքներով սահմանված նույնաբովանդակ կարգավորումների հետ, օրինակ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակների կրթական ծրագիր չի նախատեսում, ռազմարդյունաբերական համալիրը «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանում է գիտական, գիտաարտադրական, արտադրական և այլ բնույթի կազմակերպությունների ու պետական կառավարման մարմինների համակարգ, որի պարագայում տարբեր կառույցներից բաղկացած նշված համակարգը չի կարող բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ իրականացնի համատեղ ծրագիր:

2. Օրենքի 1-ին հոդվածի համաձայն սույն օրենքը կարգավորում է քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության շրջանակներում քաղաքացիների զինվորական ծառայությանը նախապատրաստության, զինվորական ծառայության և պահեստազորային պատրաստության կազմակերպման և իրականացման, ինչպես նաև զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու զինծառայողներին հավասարեցված անձանց իրավական և սոցիալական երաշխիքների հետ կապված հարաբերությունները:

Մինչդեռ, «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքին, որի 1-ին հոդվածի համաձայն սույն օրենքի նպատակն է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի կայուն, համակարգված, իրավական, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական կադրային քաղաքականության հիմքերի ստեղծումը և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ու այլ զորքերի սպառազինման պետական, ինչպես նաև ռազմատեխնիկական հավակնոտ ծրագրերի իրականացումը: Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն հավակնոտ ծրագիր է հանդիսանում պետության անվտանգության ապահովման կամ տնտեսական զարգացման նպատակով գիտական, տնտեսական, ֆինանսական, ինչպես նաև այլ հնարավորությունների համախմբմամբ նորագույնի ստեղծման ծրագիրը: Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ՌԱՀ-ի զարգացման պետական ծրագիրն ընդգրկում է ռազմարդյունաբերության ոլորտում կադրերի պատրաստման միջոցառումները: Միաժամանակ, օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման աջակցությունն իրականացվում է կադրերի պատրաստման պետական կրթական չափորոշիչների և դրանց հիման վրա մասնագիտական կրթական համապատասխան նյութական բազայի ստեղծման ծրագրերի հաստատմամբ, ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին ուսումնամեթոդական և գիտամեթոդական օժանդակությամբ:

Ուստի, գտնում ենք, որ նախագծով առաջարկվող ծրագրով նախատեսված կարգավորումները դուրս են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից:

3. Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպություններում և պետական կառավարման մարմիններում զինվորական հաստիքներ չկան, մինչդեռ նախագծով նախատեսված է, որ ծրագրին մասնակցող անձինք ստանում են կրտսեր սպայական կոչումներ:

4. Նախագծով լիարժեք և հստակ կարգավորված չեն ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագրին ու դրա իրականացման ընթացակարգին վերաբերող դրույթները, տարբեր մակարդակներում տարկետում տրամադրող մարմինները և ուսումնառության ընթացքում տարկետման դադարեցման հիմքերը, զինվորական ծառայություն անցնելու պայմանագրի կնքման և ծառայություն անցնելու, ծառայության այլ վայր գործուղելու ընթացակարգերին վերաբերող հարաբերությունները:

5. Նախագիծը խնդիրներ ունի իրավական որոշակիության սկզբունքի բացակայության, ձևակերպումների, ծրագրի կազմակերպիչներին և մասնակիցներին առաջադրվող պահանջների, նրանց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման հետևանքների ոչ բավարար հստակության առումով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է օրենքը թողնել անփոփոխ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» N 430-Ն որոշման մեջ:

ՆԱԽԱԳԻԾ

Խ-896-11.03.2021-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 22-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 3.1-ին մաս.

«3.1. Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրի (այսուհետ՝ «Ռազմաարդյունաբերական համալիր») պահանջներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել ռազմաարդյունաբերության ոլորտի պետական լիազոր մարմնում բարձրագույն կրթության երկրորդ կամ երրորդ մակարդակի կրթական ծրագրի ուսումնառությունն անցնելու ցանկություն հայտնած քաղաքացիներին, որոնց հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր: Սույն մասով նախատեսված ուսումնական ծրագրի մանրամասները սահմանվում են սույն օրենքի 1-ին հավելվածով:».

2) 4-րդ մասի «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ եւ 3.1-ին մասերով» բառերով:

Հոդված 2. Օրենքը լրացնել Հավելված 1-ով՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Սահմանվող հասկացություններ

1. Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագիր (այսուհետ՝ «Ծրագիր»)՝ Ռազմաարդյունաբերական համալիրի եւ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների համատեղ՝ բարձրագույն կրթության երկրորդ եւ երրորդ մակարդակի կրթական ծրագիր՝ ռազմական պատրաստության պարտադիր բաղադրիչով,

2. Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական Ծրագրի հավակնորդ՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված՝ տարկետման իրավունք ձեռք բերած Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

3. Ընդունող հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմաարդյունաբերության եւ կրթության ոլորտներում միասնական քաղաքականություն սահմանող եւ իրականացնող լիազոր մարմինների համատեղ որոշմամբ ստեղծված մարմին, որը սահմանում է Ծրագրի ընդունելության քննության անցկացման կարգը եւ կազմակերպում քննությունները,

4. Ծրագրի մասնակիցներ՝ ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպված եւ սահմանված կարգով քննությանն առավելագույն արդյունքներ ցուցաբերած եւ Ծրագրին մասնակցելու իրավունք ստացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ,

5. Ընթացիկ ուսումնական հաստատություն՝ ուսումնական հաստատություն, որտեղ սովորում է Ծրագրի հավակնորդ Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

Ծրագրի նկարագիրը

Ռազմաարդյունաբերական համալիրը եւ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններն իրականացնում են համատեղ ուսումնական ծրագիր, որը նպատակ ունի նշված ուսումնական հաստատություններում սովորող քաղաքացիների գիտական պոտենցիալն օգտագործել Ռազմաարդյունաբերական համալիրում՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում բարձր տեխնոլոգիաների եւ նորագույն գիտատեխնիկական ձեռքբերումների կիրառմանը, ինչպես նաեւ ստեղծել հարթակ երիտասարդ գիտնականների գիտական նոր ձեռքբերումների եւ շարունակական զարգացման համար:

Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի կրթական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվող թեմաներն առաջարկվում են Ռազմաարդյունաբերական համալիրի պահանջներին համապատասխան, որի շրջանակներում էլ պաշտպանվում է մագիստրոսական ատենախոսությունը:

Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի կրթական ծրագիրն ավարտելուց հետո քաղաքացին հնարավորություն է ստանում ուսումը շարունակել Ծրագրի շրջանակներում՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրով՝ գիտական աշխատանքի թեման համապատասխանեցնելով Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման արդիական պահանջներին:

Ծրագրին մասնակցելու համար հավակնորդ քաղաքացիները, ովքեր ուսման ընթացքում ցուցաբերել են բարձր առաջադիմություն՝ նվազագույնը «լավ» գնահատականներով, մասնակցում են ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպված քննությանը: Առավելագույն միավորներ հավաքած հավակնորդները դառնում են Ծրագրի մասնակիցներ: Մյուս հավակնորդներն անցնում են պարտադիր զինվորական ծառայության:

Ծրագրի մասնակիցները, շարունակելով համարվել ընթացիկ ուսումնական հաստատության ուսանող, ստանում են կրտսեր սպայական կոչում եւ աշխատանքի անցնում Ռազմաարդյունաբերական համալիրում՝ պայմանագրային հիմունքներով՝ առնվազն նվազագույն սպայական աշխատավարձով:

Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի կրթական ծրագիրն ավարտելուց հետո ուսանողները հնարավորություն են ստանում շարունակել գիտական գործունեությունը բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրի շրջանակներում: Ընդունելության կարգը սահմանվում է համապատասխան իրավական ակտով՝ լիազոր մարմնի կողմից: Ծրագրում ընդգրկված քաղաքացիների համար սահմանվում է աշխատավարձ՝ միջին սպայական աստիճանի առավելագույն աշխատավարձին հավասար:

Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրում չընդգրկված քաղաքացիներն անցնում են պարտադիր զինվորական ծառայության:

Ծրագրի շրջանակներում իրականացվող գիտական գործունեության ընթացքում մասնակցի կողմից կատարված բոլոր գիտական աշխատանքները եւ մտավոր սեփականության օբյեկտները համարվում են Ռազմաարդյունաբերական համալիրի սեփականություն: Մտավոր սեփականության նշյալ օբյեկտների նկատմամբ դրանք ստեղծող քաղաքացիները պահպանում են ոչ գույքային իրավունքները, ինչպես նաեւ ստանում 25% հոնորար ցանկացած հատուցվող գործարքից, որի առարկան են այդ օբյեկտները: Ցանկացած դեպքում դասակարգված տեղեկատվության գաղտնիությունը պահպանվում է պայմանագրի ողջ գործողության ընթացքում եւ դրա լուծումից հետո:

Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրի ավարտին ատենախոսությունը պաշտպանած քաղաքացիներն իրավունք ունեն միակողմանի խզել պայմանագիրը Ռազմաարդյունաբերական համալիրի հետ: Քաղաքացիների նկատմամբ կարող են կիրառվել որոշակի սահմանափակումներ՝ ըստ աշխատանքի ընթացքում առնչված գաղտնի տեղեկատվության կարեւորության: Քաղաքացին հնարավորություն է ստանում հետագայում շարունակել գիտական գործունեությունը Ռազմաարդյունաբերական համալիրում՝ կնքելով նոր աշխատանքային պայմանագիր՝ նոր պայմաններով:

Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրի ավարտին ատենախոսությունը չպաշտպանած քաղաքացիներն անցնում են պարտադիր զինվորական ծառայության:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեք ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ «Օրենք») պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետման իրավունք է սահմանում միայն բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացիների համար, մինչդեռ որոշակի մասնագիտություններով մագիստարոտական կրթական ծրագրով եւ հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերով կրթություն ստացող քաղաքացիների ներուժը եւս կարող է օգտագործվել Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի (այսուհետ՝ «Զինված ուժեր») մարտունակության բարձրացման նպատակով:

Ըստ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից 2021թ. մարտին ստացված տվյալների՝ մինչեւ 2018թ. ամառային զորակոչը ուսանողները տարկետում ստացել են անվճար ուսուցման համակարգ ընդունվելու փաստով: 2018թ. ամառային զորակոչից սկսած գործընթացը կարգավորվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. 450-Ն, 451-Ն եւ 457-Ն որոշումներով, որոնցով սահմանվել են այն բացառիկ նվաճումները, որոնց դեպքում կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ստացել են տարկետումներ:

Ներկա կարգավորումներով Հայաստանի Հանրապետության բուհերում տարկետման իրավունքով տեղեր չեն սահմանվում:

2015-2020թթ. տարկետում ստացած ուսանողների թվակազմը հետեւյալն է՝

Թվականը	Բակալավր	Մագիստրատուրա	Ասպիրանտուրա	Ընդամենը
2015 (Տարկետման իրավունքով ընդունված)	448	125	135	708
2016 (Տարկետման իրավունքով ընդունված)	1194	295	133	1622
2017 (Տարկետման իրավունքով ընդունված)	954	324	49	1327
2018 (451-Ն որոշմամբ տարկետում ստացածներ)	16	95	43	153
2019 (451-Ն որոշմամբ տարկետում ստացածներ)	26	111	83	220
2020 (451-Ն որոշմամբ տարկետում ստացածներ)	45	122	68	235

Ներկայացված նախագծով առաջարկվող մոտեցումը միտված է Ռազմաարդյունաբերական համալիրում եւ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բուհերում համատեղ ուսումնական ծրագրի իրականացմանը, որը նպատակ ունի նշված ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների գիտական պոտենցիալն օգտագործել Ռազմաարդյունաբերական համալիրում՝ նպաստելով Զինված ուժերում բարձր տեխնոլոգիաների եւ նորագույն գիտատեխնիկական ձեռքբերումների կիրառմանը եւ, մյուս կողմից, ստեղծել հարթակ երիտասարդ գիտնականների գիտական նոր ձեռքբերումների եւ շարունակական զարգացման համար:

Նախագծի գործադրմամբ՝ զինապարտ քաղաքացիներին հնարավորություն կընձեռվի շարունակել բարձրագույն կրթությունն այնպիսի ձեւաչափով, որը մի կողմից կխրախուսի ուսանողներին զբաղվել գիտությամբ, մյուս կողմից Զինված ուժերին հնարավորություն կտա օգտագործել համապատասխան գիտական պոտենցիալը:

Այսպիսով, ներկայացված ծրագրի գործարկումը նպաստելու է ռազմաարդյունաբերության զարգացմանը եւ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից որդեգրված քաղաքականության այլ ոլորտներում եւս իրացմանը: Իսկ ուսանողը հնարավորություն կստանա զինվորական ծառայությունը համատեղել արդյունավետ գիտական գործունեության հետ:

Ուսումնառության ողջ ընթացքում հետազոտությունների համար տրամադրվող դրամաշնորհները կնպաստեն բազմաթիվ հետազոտությունների, գիտական աշխատանքների իրականացմանը, թույլ կտան կիրառական նշանակության գիտական նորամուծությունները կիրառել հենց տեղում՝ ստանալով շոշափելի արդյունք: Այս ծրագրի գործարկման արդյունքում՝ Զինված ուժերը կդառնան Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացումը խթանող ուժ, եւ կստեղծվեն հնարավորություններ նոր գիտական կենտրոնների ձեւավորման համար, որոնք կսպասարկեն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախատարության, Զինված ուժերի կարիքները՝ ունենալով նաեւ կոմերցիոն զարգացման հեռանկարեր: